ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

18 հոկտեմբերի 2022 թվական

9-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2-ՐԴ ՆԻՍՏ

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԲԱՆԱՎՈՐ ՀԱՐՑԵՐԻ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ

ՍՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ժամը 17.15

Լևոն Հովհաննիսյան

-Ավագանու հարգելի անդամներ, հարց ու պատասխանի համար գրանցվել է ավագանու 11 անդամ՝

Արման Անտոնյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,
Արմեն Ներսիսյան՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցություն,
Անի Խաչատրյան՝ ԼՈՒՅՍ խմբակցություն,
Տիգրան Գալստյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,
Արմեն Ղալեչյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,
Մարկոս Հարությունյան՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցություն,
Արման Բաբաջանյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,
Պավել Սարգսյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,
Լևոն Զաքարյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,
Սերգեյ Ապրեսյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,
Մանուել Մարգարյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն:

Առաջին հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Արման Անտոնյան, խնդրեմ:

Արման Անտոնյան

-Շնորհակալություն, պարոն Հովհաննիսյան, երկու հարց ունեմ: Առաջին հարցս վերաբերում է «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկին: 2019 թ.-ին, երբ հիմնադրվեց հիմնարկը, այդ ժամանակ էլ հնչեցրել եմ նույն

հարցադրումը՝ ի՞նչ իրավական փոխհարաբերությունների մեջ է համայնքային հիմնարկը մասնավոր հատվածի հետ, և արդյո՞ք մենք հնարավորություն ունենք սպասարկելու նաև մասնավորի համապատասխան կարիքները, որովհետև կան այլ կազմակերպություններ, որոնք այդ կարիքների համար առաջարկում են ծառայություններ, այնինչ այդ նույն ծառայությունը կարող է մատուցել համայնքային հիմնարկը և հավելյալ ֆինանսական միջոցներ ներգրավել համայնքային բյուջե:

Լևոն Հովհաննիսյան

-Շատ ճիշտ հարց եք բարձրաձայնում: Այս պահի դրությամբ խնդիրը կազմաիրավական հարթակում է, և ես կարծում եմ, որ քննարկումներ դեռ կլինեն, հարցն, իհարկե, շատ հեշտ չէ լուծման համար, բայց կարող ենք մտածել և լուծումներ գտնել:

Արման Անտոնյան

-Շնորհակալություն, կարևորը, որ աշխատում ենք այդ ուղղությամբ:

Երկրորդ հարցս վերաբերում է Հանրապետության հրապարակին: Ի՞նչ աշխատանքներ են տարվում Հայաստանի ազգային պատկերասրահի կրպակը, որն իր տեղում չէ բոլոր առումներով, իրապես և վերջապես ապամոնտաժելու, ինչպես նաև հրապարակի մեջտեղում առևտուր անող, հրապարակի տեսքը խաթարող և հակասանիտարական վիճակ ստեղծող առևտրականների գործունեությունն արգելելու ուղղությամբ:

Լևոն Հովհաննիսյան

-Հարցին կպատասխանի Երևանի քաղաքապետի տեղակալ Սուրեն Գրիգորյանը:

Սուրեն Գրիգորյան

-Շնորհակալություն, կրպակի հետ կապված ամբողջական տեղեկատվություն չունեմ, սակայն, եթե չեմ սխալվում, վերջինիս հետ կապված այս պահին դատական գործ է քննվում, իսկ ավելի մանրամասն երևի կքննարկենք աշխատանքային կարգով, որպեսզի սխալ տեղեկատվություն չներկայացնեմ: Ինչ վերաբերում է Հանրապետության հրապարակին, բազմիցս այդ հարցը քննարկել ենք: Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հետ համատեղ մշակել ենք նախագիծ, որն արդեն Ազգային ժողովում է: Համապատասխան հանձնաժողովի նիստում քննարկվելուց և օրենքի ուժ ստանալուց հետո կստանանք լրացուցիչ գործիքակազմ՝ համայնքին կվերապահվի վաճառվող ապրանքը բոլոր դեպքերում առգրավելու, ապա հետո բռնագրավելու լիազորություն, ինչից հետո, կարծում եմ, նման խնդիր չի լինի:

Լևոն Հովհաննիսյան

- Հաջորդ հարցը՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ Արմեն Ներսիսյան:

Արմեն Ներսիսյան

- Երկու-երեք օր առաջ պարոն Արեյանի և նախագծողների հետ քննարկման արդյունքում Գետառի մաքրման կայանի կառուցման համար որոշեցինք տեղամաս և

եկանք այն եզրահանգման, որ կայանի կառուցման պարագայում բարենպաստ պայմաններ կստեղծվի ջրի մաքրման համար: Որպեսզի երևանցիները տեղեկանան, թե ինչ է կառուցվելու այդտեղ, խնդրում եմ մասնագիտորեն ներկայացնել մանրամասն տեղեկատվություն:

Լևոն Հովհաննիսյան

- Տեղեկատվությունը կներկայացնի Երևանի քաղաքապետի խորհրդական Կամո Արեյանը:

Կամո Արեյան

- Ավագանու նախորդ նիստի ժամանակ հաստատվեց ծրագիր, որով պետք է Գետառ գետի վրա կառուցվի մաքրման կայան: Մաքրման կայանի ծրագիրն ընտրվեց Երևան քաղաքում բնապահպանական վճարների հաշվին էկոլոգիական ծրագիր իրագործելու համար: Երևան քաղաքի վարչական տարածքում գոյացած 126 մլն դրամ բնապահպանական վճարն ավագանու որոշմամբ պետք է ուղղվի Գետառ գետի վրա մաքրման կայան կառուցելուն: Սակայն արդյո՞ք բավարար են այդ միջոցները կայանի կառուցման համար, թե ոչ, տեղում անհրաժեշտություն եղավ մրցույթում հաղթած նախագծային կազմակերպության հետ կատարել մանրակրկիտ ուսումնասիրություն: Արդյունքում ընտրվեց Վերին Շենգավիթ 2-րդ փողոցի բացօթյա հատվածը, կառուցելու մաքրման կայան՝ ջրի կուտակիչով, ինչպես նաև գետի հունով անցնող ջրից արտանետվող գարշահոտը վերացնելու կայանքներով, բայց տեղում ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ դա բավարար չէ: Վերին Շենգավիթ 2-րդ փողոցի ավելի սկզբնամասում կա դեռևս խորհրդային տարիներին կառուցված պատվար՝ 2 փականներով, որտեղ ուղղորդվում էր Գետառի հունը՝ դեպի Երևանյան լճի պատվարից ներքև՝ խառնվելու Հրազդան գետին: Մեր կողմից եղել է առաջարկ, որ վերակառուցվի նաև այդ հին պատվարը, բոլոր փականները վերակառուցվեն և մաքրվի այն ավազանը, որ այսօր տիղմով է լցված: Բնականաբար այս երկու բաղադրիչին 126 մլն դրամը բավարար չէ: Քանի որ ընթանում են բյուջետային քննարկումներ, առաջարկ է ներկայացվել քաղաքապետին գումար նախատեսելու համար: Լիարժեք նախագծային լուծումների հասնելու և շինարարության արդյունքը տեսնելու համար պահանջվում է մոտ 250 մլն դրամ: Այսինքն՝ պետական աջակցության բնապահպանական վճարների՝ Երևան քաղաքին հասանելիք չափին պետք է ավելացվի ևս 124 մլն դրամ Երևան համայնքի բյուջեից, որպեսզի այդ կայանը կառուցվի: Մրցույթը կայացել է և նախագծային կազմակերպություններից հաղթել է բավականին հեղինակավոր մի կազմակերպություն, որն ունի մեծ փորձառություն: Կարծում եմ սահմանված ժամկետում կներկայացնի նախագծային առաջադրանքը և մենք 2023թ. կսկսենք մաքրման կայանի շինարարությունը, ինչն էապես Շենգավիթ վարչական շրջանում կբարելավի գետի էկոլոգիական վիճակը, զերծ կպահի աղտոտվածությունից, միևնույն ժամանակ կուտակիչների միջոցով պարբերաբար հնարավոր կլինի իրականացնել այդ հատվածի մաքրությունը: Հարց կառաջանա, թե ով է իրականացնելու սպասարկումը:

Ներկայումս Հրազդան գետի վրա ունենք աղբաորսիչ 3 հարմարանքներ՝ մեկը տեղադրված է Երևանյան լճի պոչամբարին, 2-ը՝ ավելի վերև: Պետք է հայտարարվի մրցույթ, տեխնիկական առաջադրանքն արդեն պատրաստ է, որպեսզի այդ կայանքների սպասարկման համար ընտրվի կազմակերպություն, որն ամբողջ տարին կիրականացնի այդ կայանքների միջոցով գետերի հունի մաքրումը: Դա իրական ծրագիր է, որը կիրականացվի 2023 թվականին:

Արմեն Ներսիսյան

-Շնորհակալություն, ուրախ եմ, որ այդ հարցը վերջապես կլուծվի: Կոչ եմ անում բոլոր երևանցիներին՝ սիրենք մեր Երևանը և եթե սիրենք, ապա կհետևենք այդ սանիտարահիգիենիկ վիճակին: Կոչ եմ անում նաև վերանայել պատժամիջոցները և ամեն ինչ անենք, որ մաքրվի մեր քաղաքը: Պետք է տեսանկարահանման միջոցով բոլորին ցույց տանք, թե ովքեր են աղբ թափողները, որ ամաչեն ու չկրկնեն:

Երկրորդ հարցս հնչեցնեմ. քանի որ խոսում էինք էկոլոգիայի մասին, Էրեբունի վարչական շրջանում և 3-րդ, 4-րդ զանգվածներում թաղված են մեծ քանակությամբ թունաքիմիկատներ: Քանի որ այդ տարածքները սողանքային են, անձրևի, ձյան հալվելու արդյունքում այդ թունաքիմիկատների որոշակի զանգված լցվում է Ողջաբերդ գետ և հատկապես գարնանը գետի տարածքում զգացվում է այդ թունաքիմիկատների հոտը: Ուզում եմ հիշեցնել, որ այդ թունաքիմիկատների գերեզմանի ոչնչացման համար Եվրոպական զարգացման բանկը փոխանցել էր 5մլն եվրո: Խնդրում եմ ասել, թե ի՞նչ գործընթացներ են տեղի ունենում այդ թունաքիմիկատների ոչնչացման ուղղությամբ և ե՞րբ է վերջնական լուծում տրվելու:

Լևոն Հովհաննիսյան

- Հարցին կպատասխանի Երևանի քաղաքապետի խորհրդական Կամո Արեյանը:

Կամո Արեյան

- Պարոն Ներսիսյան, չորս տարի առաջ նախաձեռնվեց թունաքիմիկատների վերաթաղման ծրագիրը: Ճիշտ է, թունաքիմիկատների գերեզմանը գտնվում է Երևանի Էրեբունի վարչական շրջանում, սակայն գործառույթն ամբողջությամբ քաղաքապետարանինը չէ: ԱՄՆ-ի զարգացման գործակալության ֆինանսավորմամբ մեկնարկեց այդպիսի ծրագիր: Բազմաթիվ հանդիպումներ և քննարկումներ եմ ունեցել ծրագրի ղեկավարի հետ քաղաքապետարանում: Մեր կողմից թողարկվել է տարածքի հատակագիծը, այնուհետև, պայմանների համաձայն, պետք է ապահովեինք գրունտային ճանապարհի կառուցում՝ դեպի այդ տարածքը, «Վեոլիա ջուր» ընկերության հետ պետք է կարգավորվեր ջրի հարցը և պետք է դիմեինք «Հայաստանի էլեկտրացանցեր» ընկերությանը, որ էլեկտրամատակարարումն ապահովվեր, որովհետև դա տևական պրոցես էր: Սրանք եղել են պայմանավորված պարտականություններ մեր կողմից, որ մենք կաջակցենք: Ծրագիրն իրականացվում էր ՀՀ կառավարության կողմից, հատկապես՝ Շրջակա միջավայրի պահպանության և արտակարգ իրավիճակների

նախարարությունների նախաձեռնությամբ: Ընտրվել էր երկու տեղ, մեկը՝ «Նաիրիտ» գործարանի հատվածը, որը հետագայում դուրս եկավ շրջանառությունից, երկրորդը՝ այդ սողանքային տարածքով դեպի Ջրվեժ տանող ճանապարհին՝ որ տեղափոխվեր մեկ այլ ստորգետնյա պահեստարան՝ պահեստավորելու համար: Ծրագիրը կանգ է առել այս փուլում, մինչև այսօր որևէ տեղաշարժ չի եղել, որևէ առաջարկ կամ նախաձեռնություն չի ներկայացվել լիազորված մարմինների կողմից Երևանի քաղաքապետարանին: Առաջարկ լինելու պարագայում այն, ինչ հնարավոր է, մենք կանենք:

Արմեն Ներսիսյան

- Արձագանքեմ. ճիշտ եք պարոն Արեյան, ես չեմ ասում մեր տարածքն է, սակայն մեր հայրենիքում են գտնվում այդ թունաքիմիկատները: Այս հարցի մասին ես մտահոգված եմ, որովհետև հետևանքները կարդալուց հետո հասկացել եմ, որ լուրջ է դրա խնդիրը: Ես կրկին կոչ եմ անում հետևել այդ գործընթացին, արագ լուծում տալու համար, որովհետև դրա հետևանքներն ահավոր են: Հայաստանում տարածված անպտղությունը ևս ես կապում եմ այդ թունաքիմիկատների գերեզմանի հետ և եթե ես ճիշտ չեմ ասում, թող հերքեն:

Լևոն Հովհաննիսյան

- Հաջորդ հարցը՝ Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության անդամ Անի Խաչատրյան:

Անի Խաչատրյան

- Հարցս վերաբերում է Շերամի փողոցի ճանապարհի կառուցապատմանը: Այդտեղ մի հատված կա, որ երկու բնակչի հետ խնդիր կա ու արդեն բավական ժամանակ է չի լուծվում: Բայց վերջերս այդ մարդկանց այցելել են «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ից ու ասել են, որ եկել են քանդելու տարածքը՝ առանց զգուշացնելու: Ուզում եմ հասկանալ, թե ինչպես են այդ գերակա շահ ճանաչված տարածքը քանդելու, վերցնելու, եթե մենք չունենք չափագրում, թե որքանն է ճանաչված գերակա շահ, չկա որևէ փաստաթուղթ: Բացի այդ երկու սեփականատերերից մեկին նույն քմ-ի համար հատկացվում է մոտ 46մլն դրամ գումար, իսկ մյուսին՝ նույն քմ-ի համար՝ մոտ 130մլն դրամ: Ո՞րն է տարբերությունը: Եվ հետո այնտեղ այդ մարդիկ բավականին մեծ հողատարածություն ունեն: Մենք վերցնում ենք այն հատվածը, որքան մեզ պետք է ճանապարհի համար, այդ մարդկանց մնացած հողը փաստացի դառնում է անպետք: Բայց մենք նրանց վճարում ենք միայն օգտագործած հողամասի համար: Այստեղ կա քաղաքի ու քաղաքացիների շահի խնդիր: Իհարկե, քաղաքացիներն իրենց ունեցածը շա՛տ բարձր են գնահատում, ինչի հետ ես համաձայն չեմ, բայց ինձ համար նորմալ չէ, որ երկու հավասար իրավունքներ, հավասար չափի հողատարածք ունեցող քաղաքացիներին տարբեր գումարային հատկացումներ է արվում: Ի՞նչն է խնդիրը:

Լևոն Հովհաննիսյան

- Հարցին կպատասխանի Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Տարոն Մարգարյանը:

Տարոն Մարգարյան

- Տիկին Խաչատրյան, Ձեր բարձրացրած հարցին մանրամասն տեղյակ չեմ, քանի որ հարցը կարգավորում է «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ը, բայց օրենքով մասնակի գերակա շահ ճանաչելու հնարավորություն էլ է նախատեսվում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ մնացորդ գույքը կորցնում է իր տնտեսական նշանակությունը: Տվյալ դեպքում կարծում եմ այդ ուսումնասիրությունն արվել է: Ինչ վերաբերում է գումարների տարբերությանը՝ համանման դեպքերի ականատես ենք եղել, որը պայմանավորված է եղել այն հանգամանքով, որ հողամասի մի մասը եղել է ապօրինի զավթված և ծառերի դիմաց փոխհատուցում են տվել, դրա համար գումարը քիչ է եղել, իսկ մյուս մասը եղել է անձին սեփականության իրավունքով պատկանող: Այս դեպքի հետ կապված «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ից ավելի մանրամասն տեղեկատվություն կստանանք և Ձեզ կտեղեկացնենք:

Անի Խաչատրյան

- Շնորհակալություն: Երկրորդը հարց չէ, այլ մտահոգություն, որ վերաբերում է «Երքաղլույս» ՓԲ ընկերությանը: Այդ ընկերությունն աշխատում է շատ վատ, այդ թվում՝ վարչական շրջանների հետ, որովհետև վարչական շրջանների ղեկավարներին այդ հարցերով զանգահարում ենք, իրենք պատրաստակամ են խնդիրը լուծելու, սակայն «Երքաղլույս» ՓԲ ընկերությունում այդ հարցը մնում է չլուծված: Ես գրեթե վստահ եմ, որ այդ խնդիրը վարչական շրջանների մեջ չի, այդ կառույցին պետք է հետևել:

Լևոն Հովհաննիսյան

-Շնորհակալություն, տիկին Խաչատրյան:

Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Տիգրան Գալստյան, խնդրեմ:

Տիգրան Գալստյան

-Շնորհակալություն, պարոն Հովհաննիսյան, երկու հարց ունեմ: Կարծում եմ առաջին հարցս կհետաքրքրի մեր բազմաթիվ համաքաղաքացիներին, այն վերաբերում է ինքնակամ շինությունների օրինականացմանը: Ինչու՞ է սառեցվել այդ գործընթացը: Այս հարցով դիմել էի նաև քաղաքապետին: Ըստ նրա՝ կան որոշակի տեխնիկական թերություններ, որոնց վերացնելուց հետո մենք արդյունքները կտեսնենք: Սակայն մինչ օրս արդյունքը չի երևում: Հարցս վերաբերում է համայնքային հողերի վրա կառուցված ինքնակամ շինություններին:

Լևոն Հովհաննիսյան

- Հարցին պետք է պատասխաներ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար Սեյրան Մեջլումյանը, սակայն նա նիստին ներկա չէ, ուստի խնդրում եմ հնչեցրեք երկրորդ հարցը:

Տիգրան Գալստյան

-Շնորհակալություն, հաջորդ հարցս նույնպես քաղաքաշինության ոլորտից է: Իմ տեղեկություններով, երբ կառուցապատողը դիմում է քաղաքապետարան բազմաբնակարան շենքի կառուցման շինթույլտվություն ստանալու համար, օրինակ՝ 21 հարկանի շենքի, նրան տրվում է 12 հարկ կառուցելու թույլտվություն, իսկ հետո, շինարարության ընթացքում կրկնակի անգամ դիմում են և ստանում են հարկայնության բարձրացման թույլտվություն, օրինակ՝ 16 հարկ: Արդյոք նման դեպքեր եղել են այս տարի, և ինչո՞վ է դա պայմանավորված:

Լևոն Հովհաննիսյան

-Հարցին կպատասխանի Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման ծրագրերի բաժնի պետ Անդրանիկ Սեդոյանը, խնդրեմ:

Անդրանիկ Սեդոյան

- Շնորհակալություն հարցի համար: Նախ ուզում եմ նշել, որ, հավանաբար քաղաքի կառավարման մոտեցումն էր, որը վերջին ժամանակահատվածում փոխվեց, այսինքն նախկին քաղաքապետի՝ պարոն Մարությանի մոտեցումն այն էր, որ տվյալ թույլտվությունները, անկախ այն բանից, թե որ քաղաքապետի օրոք են տրամադրվել, չէին վերանայվում, բայց պարոն Սարգսյանի օրոք դա միանշանակ չէ, և այն հայտերը, որտեղ կա իրավահավասարաչափության սկզբունք կամ կողքը կան թելադրող քաղաքաշինական այլ կառույցներ, որոնք չեն բացառում հարկայնության փոփոխությունը, նորից սկսեցին քննարկել: Սա է եղել մոտեցումը, բայց չկան դեպքեր, երբ պարոն Սարգսյանի օրոք տրամադրվել է նախագծման թույլտվություն, հետո դրա վրա փոխվել է հարկայնությունը: Այդպիսի դեպքեր, համենայնդեպս բազմաբնակարան շենքերի մասով, ես բացառում եմ:

Լևոն Հովհաննիսյան

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Արմեն Ղալեչյան, խնդրեմ:

Արմեն Ղալեչյան

- Շնորհակալություն, քաղաքապետարանի երկրորդ մասնաշենքում վերջերս ներկա եմ գտնվել քաղաքացիների մի քանի ընդունելությունների, լսել եմ նրանց բողոքները, որոնք մեծամասամբ պայմանավորված էին նրանց անտեղյակությամբ՝ իրենց դիմումների ընթացքի վերաբերյալ: Պարզվում է 100-ից ավել քանակով դիմում՝ ինքնակամ շինությունների վերաբերյալ, մնացել է աշխատակազմի քարտուղարի մոտ: Կցանկանայի պարզաբանում տրվեր դրա վերաբերյալ: Երկրորդ հարցս վերաբերում է փաստաթղթաշրջանառության Mulberry համակարգին: Ինձ համար անտրամաբանական, անընդունելի և անհասկանալի է, թե ինչպես կարելի է սահմանափակել ավագանու անդամի հասանելիությունը քաղաքացիների դիմումներին և դրանց ընթացքին: Պարզվում է մենք այդ հասանելիությունից զրկված ենք, և խնդրում եմ վերականգնել: Քանի որ աշխատակազմի քարտուղարն այստեղ չէ, խնդրում եմ, գուցե, այս հարցի լուծման պատասխանատվությունը վերցնեք Ձեզ վրա, պարոն Հովհաննիսյան:

Լևոն Հովհաննիսյան

-Շատ լավ, շնորհակալություն:

Հաջորդ հարցը՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ Մարկոս Հարությունյան, խնդրեմ:

Մարկոս Հարությունյան

-Շնորհակալություն, պարոն Հովհաննիսյան, առաջին հարցով կուզենայի իմանալ, թե ի՞նչ առաջընթաց ունենք Արզումանյան փող. հ.10 և հ.17 վթարային շենքերի մասով, ի՞նչ ճակատագիր է սպասվում ու ի՞նչ ժամկետներում:

Լևոն Հովհաննիսյան

- Հարցին կպատասխանի Երևանի քաղաքապետի տեղակալ Տիգրան Ավինյանը:

Տիգրան Ավինյան

-Շնորհակալություն հարցի համար: Իմ առաջին շրջայցը եղել է Աջափնյակ վարչական շրջանում, հանդիպել եմ Արզումանյան փող. հհ. 10 և 17 շենքերի բնակիչներին: Մենք պայմանավորվածություն ենք ձեռք բերել, որ առաջին հերթին արդ երկու շենքերը ճանաչվեն գերակա շահ, ինչի վերաբերյալ որոշումներն ադեն իսկ ուղարկվել են ՀՀ կառավարություն, և ես վստահ եմ, որ խնդիրը 6 ամսում վերջնական լուծում կստանա:

Մարկոս Հարությունյան

-Շնորհակալություն, պարոն Ավինյան, երկրորդ հարցս հետևյալն է. մենք քաղաքում ունենք վայրեր, որտեղ կան վթարային շենքեր, սակայն այդ վայրերը կառուցապատողներին հետաքրքիր չեն, որպեսզի նոր շենքեր կառուցեն և բնակարաններով ապահովեն վթարային շենքերի բնակիչներին, օրինակ՝ Էրեբունի վարչական շրջանի ծայրամասում կան 4-րդ կարգի վթարային շենքեր: Ցանկալի կլիներ, որպեսզի օգտագործեք կառավարության հետ Ձեր կապերը, փորձենք գումարներ խնդրել, որպեսզի մասնավոր կառուցապատողին զուգահեռ նաև համայնքը շենք կառուցի՝ այդ խնդրահարույց վայրերի վթարային շենքերի բնակիչներին բնակարաններով ապահովելու համար:

Տիգրան Ավինյան

- Ինչ վերաբերում է այն հարցին, որ վթարային շենքերի տեղակայման վայրերը հետաքրքիր չեն լինի կառուցապատողներին, մենք միշտ չէ, որ կառուցապատման պոտենցիալ նախագիծը պետք է կապենք կառուցապատողի հետ: Մենք պետք է փուլ առ փուլ այդ կառուցապատողներին ուղղորդենք դեպի քաղաքի խնդիրները, որպեսզի տեղի ունենա և՛ բնակֆոնդի թարմացում, և՛ լուծվեն բնակելի շենքերի հարցերը: Շնորհակալություն:

Լևոն Հովհաննիսյան

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Արման Բաբաջանյան, խնդրեմ:

Արման Բաբաջանյան

-Շնորհակալություն: Վերջերս դիմում էի ստացել Մոլդովական փողոցի սեփական տների մի խումբ բնակիչներից այն մասին, որ համայնքային հողամասերը վաճառվել են, այնտեղ կառուցվել են սեփական տներ, եղած ճանապարհն ասֆալտապատվել է և մինչև օրս ծառայում է այդ բնակիչներին իրենց բնակարաններ մուտք գործելու համար, և հետո պարզվել է, որ այդ ճանապարհի մի հատվածն անցնում է այլ սեփականատիրոջ հողամասի միջով: Այժմ այդ սեփականատերը որոշել է այդտեղ կառուցապատում անի, ինչի արդյունքում ճանապարհը փակվելու է: Ուզում եմ հասկանալ, այդ ճանապարհը փակվելուց հետո ի՞նչ ճանապարհ է առաջարկվելու այդտեղի բնակիչներին՝ իրենց տներ մուտք ու ելք անելու համար: Շնորհակալություն:

Լևոն Հովհաննիսյան

-Հարցին կպատասխանի Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի պաշտոնակատար Դավիթ Դալլաքյանը, խնդրեմ:

Դավիթ Դալլաքյան

-Շնորհակալություն, պարոն Բաբաջանյան, Ձեր նշած մասնավոր դեպքի մանրամասներին չեմ տիրապետում, խնդրում եմ տեղեկատվությունը փոխանցել մեզ, ուսումնասիրենք հողամասի և կադաստրային քարտեզի մասով, այնուհետև Ձեզ լրացուցիչ կպատասխանենք:

Լևոն Հովհաննիսյան

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Պավել Սարգսյան, խնդրեմ:

Պավել Սարգսյան

-Շնորհակալություն, պարոն Հովհաննիսյան, մոտ մեկ տարի առաջ մեկնարկեց մի ծրագիր, որն այս պահին կարծես թե չի իրականացվում: Ըստ այդ ծրագրի՝ 28 փողոցներում սյունից սյուն ձգվող մալուխագծերը պետք է ապամոնտաժվեին և իջեցվեին գետնի տակ: Թումանյան փողոցի վրա իրականացվեցին աշխատանքներ, սակայն չավարտվեցին, նույնը կատարվում է Մյասնիկյան պողոտայում: Հարցս հետևյալն է՝ ո՞րն է խնդիրը, որ ծրագիրը չի իրականացվում, և ե՞րբ կլուծվի Մյասնիկյան պողոտայի խնդիրը, ինչը կարող է երթևեկության համար բավական վտանգավոր միջադեպեր ստեղծել:

Լևոն Հովհաննիսյան

-Շնորհակալություն, հարցին կպատասխանի Երևանի քաղաքապետի խորհրդական Կամո Արեյանը:

Կամո Արեյան

-Շնորհակալություն, այո, Ձեր նշածը վարկային միջոցներով իրականացվող ծրագիր է, և ծրագրի կատարման պատասխանատուն «Երքաղլույս» ՓԲ ընկերությունն է: Նա նաև վարկը մարող կազմակերպությունն է: Բնականաբար կա ծրագրի կառավարիչ և տեխնիկական հսկող: Թվով 6 փողոց անավարտ թողելուց հետո ծրագրի ժամկետը լրացել էր, և «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ»

ՀՈԱԿ-ի անմիջական օգնությամբ երկարացվել է մինչև 2023 թվականի վերջը: Միաժամանակ ծրագրում կատարվել են նախագծային տեխնիկական փոփոխություններ: Ձեր նշած Թումանյան փողոցի օրինակով անհնար էր դառնում մայթերով այդ մալուխագծերը տեղադրելը: Առաջարկ եղավ այն տեղափոխել երթևեկելի մաս, փոխել խրամուղու չափերը (35x35), որպեսզի կոմունիկացիաներին չխանգարի: Դա նույնպես արվեց: Իմ առաջարկությամբ փոխվել է տեխնիկական հսկողը, այսինքն կազմակերպական առումով ամեն ինչ արվել է, մնում են պատվիրատուն և կապալառուն: Ֆիննական ընկերության ներկայացուցիչը մեկ ամիս առաջ հյուրընկալվել էր քաղաքապետարանում: Իմ կողմից նրա առջև դրվել է շատ կոշտ պահանջ, որ իրենց անգործության պատճառով մենք չենք պատրաստվում վարկաբեկել մեր քաղաքի և մեր բնակչի հեղինակությունը: Կազմակերպական բոլոր ռեսուրսները մոբիլիզացված են: Այս պահին աշխատանքներ են ընթանում Աճառյան փողոցի վրա և հասել են արդեն Մյասնիկյան պողոտա: Խնդիր է դրվել ավարտել կիսատ թողած 6 փողոցների աշխատանքները, այնուհետև անցնել հաջորդներին: Եվս մեկ անգամ հուսադրում եմ Ձեզ, որ մեկ-երկու կազմակերպական միջոցառումից հետո ամբողջ ծրագիրը լայն թափով կշարունակվի: Այս ծրագրից մենք չենք հրաժարվել, այն շատ կարևոր է քաղաքի համար:

Պավել Սարգսյան

-Շնորհակալություն, պարոն Հովհաննիսյան, երկրորդ հարցս վերաբերում է կանաչապատմանը: Ուզում եմ հասկանալ հետևյալը. շատ ողջունելի է, որ քաղաքում այժմ մեծ թափով ծառեր ենք տնկում, բայց կա մի կարևոր հանգամանք, որ այդ ծառերը, որոնցից ամենամեծերը մոտ 2-3 մետրանոց բարակ շիվեր են, 1-2 տարի հետո, կոպիտ ասած, չեն աշխատելու: Ինչու՞մ է խնդիրը, որ չենք կարողանում ավելի մեծ (բարձրությունը՝ 4մ և ավել, բնի տրամագիծը՝ 7-8սմ) ծառեր տնկել և ապահովել ավելի մեծ արդյունավետություն:

Լևոն Հովհաննիսյան

-Շնորհակալություն, հարցին կպատասխանի բնապահպանության վարչության պետի տեղակալի պաշտոնակատար Գայանե Ներսիսյանը, խնդրեմ:

Գայանե Ներսիսյան

-Շնորհակալություն հարցի համար: Ձեր կողմից բարձրացված հարցը դիտարկվել է և՛ բնապահպանության վարչության և՛ «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի կողմից: Որպեսզի ձեռք բերենք Ձեր կողմից մատնանշված պարամետրերով ծառեր, արդեն իսկ կազմվել են համապատասխան տեխնիկական պայմաններ, և կայանալու է մրցույթ: Այսուհետ, հենց այս տարվա ընթացքում ձեռք ենք բերելու նմանատիպ մեծ ծառեր՝ հասու և 3 մետրից բարձր, լինելու են փակ հողագնդով: Քաղաքապետարանի պաշտոնական կայքում նույնպես նշված է այդ մասին: Փողոցային տնկարկները լինելու են առանձին տեսակի՝ փողոցներին համապատասխան, որպեսզի հետագայում խուսափենք մեծաքանակ էտումներից, իսկ այգիների և այլ տարածքների

համար՝ այլ տեսակի, վերջիններիս համապատասխան: Այստեղ եղել են մասնագիտական վերանայումներ:

Լևոն Հովհաննիսյան

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Լևոն Զաքարյան, խնդրեմ:

Լևոն Զաքարյան

-Շնորհակալություն, հարցս վերաբերում է հասարակական տրանսպորտին. մենք ունենք նոր շահագործման հանձնված կամուրջ՝ Շենգավիթ վարչական շրջանից դեպի Մալաթիա-Սեբաստիա: Արդյո՞ք նախատեսվում է տրանսպորտային նոր գիծ այդ ճանապարհի համար:

Լևոն Հովհաննիսյան

-Շնորհակալություն, հարցին կպատասխանի տրանսպորտի վարչության պետի պաշտոնակատար Հայկ Սարգսյանը, խնդրեմ:

Հայկ Սարգսյան

-Շնորհակալություն հարցի համար, պարոն Զաքարյան: Իհարկե, նախագիծը կա, սպասում ենք նոր ավտոբուսներին, որպեսզի վերանայենք նոր գծերը, շնորհակալություն:

Լևոն Հովհաննիսյան

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Սերգեյ Ապրեսյան, խնդրեմ:

Սերգեյ Ապրեսյան

-Շնորհակալություն, առաջին հարցս վերաբերում է առողջապահության ոլորտին: Այսօր մեր պոլիկլինիկաներում ստեղծվել է մի իրավիճակ, երբ քաղաքացին մոտենում է պոլիկլինիկա, գրանցվում է ԱրՄեդ համակարգում, այնուհետև իր ամբուլատոր քարտով ինչ որ անհասկանալի և անիմաստ հերթեր է կանգնում, մինչև մտնում է բժշկի մոտ: Ինչպե՞ս պետք է կարգավորվի այս ամենը, մինչև ոլորտը ամբողջությամբ թվայնացվի:

Լևոն Հովհաննիսյան

-Հարցին կպատասխանի Երևանի քաղաքապետի տեղակալ Գևորգ Սիմոնյանը, խնդրեմ:

Գևորգ Սիմոնյան

-Շնորհակալություն, Ձեր ասածը նորություն չի, բոլորս գիտենք, որ իրավիճակն այդպիսին է: Այդտեղ կան օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմեր: Օբյեկտիվն այն է, որ չկա տեխնիկական հագեցվածություն, և գործընթացները հնարավոր չէ թվայնացնել, իսկ սուբյեկտիվը՝ որ խնդիրը լոկալ է, ունենք պոլիկլինիկաներ, որտեղ այդ խնդիրը չկա, այսինքն կազմակերպչական մակարդակում այնպես է արված, որ չկա, սակայն փոփոխությունների արդյունքում, կոպիտ ասած, դեռ այդտեղ չենք հասել: Հաջորդ տարի նախատեսում ենք ստանդարտացման պրոցեսներ, որն իրենից ենթադրում է նաև պրոցեսների ստանդարտացում, ինչը որ բոլոր կենտրոններում բերելու է աշխատանքի նույն տրամաբանության, ու նման խնդիրները դուրս են գալու:

Սերգեյ Ապրեսյան

-Շնորհակալություն, երկրորդ հարցս հետևյալն է. եթե չեմ սխալվում, մենք բյուջեում նախատեսել էինք տող, ըստ որի Երևան քաղաքում բոլոր շենքերին պետք է փակցվեին հասցեների ցուցանակներ, ի՞նչ փուլում է այդ գործընթացը:

Լևոն Հովհաննիսյան

-Շնորհակալություն, պարոն Ապրեսյան, մենք այս տարի ևս բյուջեում նախատեսել ենք տող՝ ցուցանակների պատրաստման համար: Այո, գործընթացը երկարում է, մի քանի նմուշներ տեսել եմ, կարծում եմ շատ երկար ընտրել պետք չէ, այս տարի խնդիրը կփակենք և հաջորդ տարի գործը ավարտին կհասցնենք:

Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Մանուել Մարգարյան, խնդրեմ:

Մանուել Մարգարյան

-Շնորհակալություն, պարոն Հովհաննիսյան, հարցս վերաբերում է Երևանի Կիլիկիա թաղամասի բնակիչների խնդրանքին: Նախկինում թաղամասում գործում էր հ.4 երթուղին, որը 2018 թվականին փակվեց: Ուզում եմ իմանալ՝ այդ երթուղին նորից գործելու՞ է, թե ոչ:

Լևոն Հովհաննիսյան

-Շնորհակալություն, հարցին կպատասխանի Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետի պաշտոնակատար Հայկ Սարգսյանը, խնդրեմ:

Հայկ Սարգսյան

-Շնորհակալություն հարցի համար, նշեմ, որ մեր կողմից ոչ մի երթուղի չի փակվում, ուղղակի դա տեղի է ունենում մեքենայորեն՝ կապված երթուղու մեքենաների տարիքի հետ: Այո, իհարկե, Կիլիկիա թաղամասի սպասարկման հարցը նույնպես քննարկվում է: Մինչև երթուղային ցանցի ներդրումը երևի դա նույնպես կներառվի:

Մանուել Մարգարյան

-Շնորհակալություն, երկրորդ հարցս վերաբերում է Իսակովի պողոտայից դեպի Արշակունյաց պողոտա կառուցվող նոր ճանապարհահանգույցին: Ուզում եմ հասկանալ, թե ի՞նչ փուլում են գտնվում վերջինիս կառուցման աշխատանքները:

Լևոն Հովհաննիսյան

- Հարցին կպատասխանի Երևանի քաղաքապետի տեղակալ Տիգրան Ավինյանը:

Տիգրան Ավինյան

-Շնորհակալություն, իրականում նախորդ շաբաթ ենք խոսել ՀՀ ֆինանսների նախարարի և նրա տեղակալի հետ: Նրանք առաջարկում էին վարկային համաձայնագիր դեռևս չկնքել, որովհետև մտահոգություն կար, որ օտարումների հետ կապված խնդիրներ ունենք, և այդ պրոցեսը երկար է տևելու: Բայց իրականությունն այն է, որ մենք այսօր այդ հատվածներում ունենք համայնքային հողեր և հնարավորություն ունենք մասնակի հասանելիություն տալու կապալառուին՝ աշխատանքներ իրականացնելու համար և զուգահեռաբար օտարել մնացած հատվածները: Համաձայնություն է ձեռք բերվել, որ

ֆինանսների նախարարությունը խնդիրը կլուծի, համաձայնագիրը կստորագրվի և կանցնենք փաստացի աշխատանքների կատարմանը:

Լևոն Հովհաննիսյան

-Շնորհակալություն, ավարտվեց հարց ու պատասխանը, ավագանու հարգելի անդամներ, հարգելի գործընկերներ, Երևանի ավագանու 9-րդ նստաշրջանի 2-րդ նիստը հայտարարում եմ փակված: Շնորհակալություն, ցտեսություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Լ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կազմեց՝ Ա.Գևորգյան